

- 2 ի Ո՞ն թվո, ես՝ Գուրգոս, Հասան, Համազաս(փ)պ, Սարգիս, որդիք Սմբատա,
 որդո Համ(ա)զ(ա)սպա մարծ-
 3 պանի, տվաք զՄանթշա կէսն ի մեր հայրենեացս, ի մեր հողս Տայքս՝
 ի Սան(ա)հինս՝
 4 մեր մեռելոցն հողոյն եւ մեր արեւշատութեան: Ընկալաք հայրս Յովա-
 նես եւ միաբանք
 5 եւ գրեցաք զհամբարձումն աւրս զամէն եկեղեցիք նացա ժամն, մինչ
 ուխտս ի հաստատութե եւ զ-
 6 աւուրս հացն ի նացա անուն զսեղանիս: Մի ոք խափանեսցէ:

Մանրորդուն.— 1. Երկրորդ տողում թվո-ն ոչ թե թուիս կամ թուականիս բառերի համառոտագրութիւնն է, այլ թիւ բառի սեռականը՝ թուոյ:

2. Երրորդ տողում զՄանթշա բառը Մանթաշ տեղանվան սեռականն է:

3. Հինգերորդ տողում եկեղեցիքս նացա փակագրի պատճառով կարելի է կարգալ եկեղեցիքն սացա, բայց 6-րդ տողում նույն դերանունը նացա ձևով գրվելու պատճառով 5-րդ տողում էլ կարգում ենք եկեղեցիքս նացա: Նացա-ն չենք ուղղում նոցա-ի, համարելով այն բարբառային երևույթ, որովհետև 6-րդ տողում էլ նացա է գրված:

4. Վեցերորդ տողում զաւուրս հացն պետք է հասկանալ օրվա պատարագը, այլապես պետք է ենթադրել, որ տոն օրերին նվերատուի հիշատակին կամ արեւշատութեան համար հասարակութեան տրվող հացի սովորութիւնն է եղել:

Տարբերքում.— Առաջին տողի Գուրգի (Գեորգի) անունը Արիմ բաց է թողել, բայց ծանոթութեան մեջ հիշատակել է Կիւրիկէ անունը, որ սխալ է, որովհետև վրացիք Կիւրիկէ թագավոր չեն ունեցել: Այստեղ Գուրգի-ն Յուրի Բոգոյլուրսկին է, որի անունը Վրաստանում Գեորգի դարձրին:

Երրորդ տողի Մանթաշ բառը (սեռ. Մանթշա) Ջալ կարգացել է Մթնաշէն (գյուղի անուն), Արիմ Մաթուշայ, Հար գթշա:

Երրորդ տողում Տայքս բառը Ջալ միացրել է նախորդ հողս բառի հետ և ստացել Հողոտայքս տեղանունը: Արիմ, Տայքս-ը բայ կարծելով, կարգացել է տուաք:

14. Նախորդից դեպի ան, Աստվածածնա ժամասան համար շինած կամարավոր պատի վրա

(Լուս. № 31)

Հ ՌՃԱ Մ 1652

Հրատարակված է՝ Ջալ 19, Արիմ 66, Վիմ 184

- 1 ի թվիս հայոց ՌՃԱ:
 2 ի թագաւորութի պարսից փոքրն Շահապազի և ի վրաց Բագրատունի Ռոստամ շահն-
 3 շահի, եւ հայրայպետութեց ան Փիլիպոսի եւ Յակոբայ, եւ ամիրայութե Աորխմազ բէկին: Կամաւն Մյ
 4 ես՝ Սարգիս այնեպկս, որդի Մէլիքին, ազգէ Արղութին, ծառայ որ ուխտիս, որ է սրոց բնակարան,